ԳԻՏԱԿԱՆ ՌԵՖԵՐԱՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Գիտական ռեֆերատը կարող է ներկայացվել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն։

ԳԻՏԱԿԱՆ ՌԵՖԵՐԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գիտական ռեֆերատը պատրաստվում է՝ օգտագործելով Microsoft Word-ի խմբագրիչը և շարադրվում է 18-20 էջի սահմաններում։ Գիտական ռեֆերատի Հայերեն տեքստում օգտագործում է GHEA Grapalat, ռուսերեն և անգլերեն տեքստերում՝ Times New Roman տառատեսակները։ Գիտական ռեֆերատի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (210x297) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 3 սմ, աջից՝ 1,5 սմ, վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2 սմ: Հիմնական տեքստը շարադրվում է 12, ծանոթագրությունները՝ 10 տառաչափերով, միջտողային հեռավորությունը պետք է լինի 1,5: Մեջբերումների համար օգտագործվող չակերտներն են՝ «…. »:

Աղյուսակները

Աղյուսակները պետք է ունենան վերնագրեր, օրինակ՝ «Աղյուսակ 1. Աղյուսակի անվանումը»: Աղյուսակի մեջ զետեղված բառերը գրվում են ամբողջությամբ: Վերնագրերի և վանդակների վերջում վերջակետ չի դրվում: Այլ աղբյուրներից ներբեռնված աղյուսակներն ուղեկցվում են համապատասխան աղբյուրի հղումով։

Գծապատկերները

Գծապատկերների ներքևում տեղադրվում է նշում «Գծապատկեր 1. Գծապատկերի անվանում»: Վերնագրերի և նշումների վերջում վերջակետ չի դրվում: Այլ աղբյուրներից ներբեռնված գծապատկերները ուղեկցվում են հղումով համապատասխան աղբյուրին։

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Գիտական ռեֆերատը պետք է ունենա տիտղոսաթերթ, որի վրա նշված է ուսումնական հաստատության անվանումը, կոնկրետ մասնագիտությամբ/դասիչով գիտական ռեֆերատ լինելը, ռեֆերատի վերնագիրը՝ թավ (Bold), դիմորդի անուն, ազգանուն, հայրանունը:

ԳԻՏԱԿԱՆ ՌԵՖԵՐԱՏ ՎԵՐՆԱԳԻՐԸ

Գիտական ռեֆերատի հեղինակի տվյալներից անմիջապես հետո՝ էջի մեջտեղում գլխատառերով և թավ (Bold) գրվում է Գիտական ռեֆերատի վերնագիրը (մինչև 20 բառ):

ԳԻՏԱԿԱՆ ՌԵՖԵՐԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Ամփոփագիր և հիմնաբառեր (Abstract, Keywords)
2. Ներածություն (Introduction)
3. Մեթոդ (տեսական հիմքեր) (Methods, Theoretical Basis)
4. Արդյունքներ (Results)
5. Քննարկում (Discussion)
6. Եզրակացություն (Conclusion)
7. Օգտագործված գրականության ցանկ:

1. Ամփոփագիր և հիմնաբառեր

Ամփոփագիրը ներառում է հիմնական թեմայի, խնդրի, օբյեկտի բնութագիրը, հետազոտության նպատակները, արդյունքների արժեքը, ինչպես նաև աշխատանքի արդյունքի գործնական նշանակությունը: Անհրաժեշտ է նշել, թե ինչ նորույթ է պարունակում գիտական ռեֆերատը ի տարբերություն թեմայի հետ կապված այլ գիտական ռեֆերատների:

Այսինքն՝ այն ներկայացնում է իրենից գիտական ռեֆերատի հիմնական դրույթների ամփոփ նկարագիրը:

Ամփոփագիրը ներկայացվում է 100-200 բառի սահմաններում:

Հիմնաբառերը

Հիմնաբառերը ներկայացվում են 6-10 բառերի շրջանակում:

2. Ներածություն

Այս բաժինը պատասխանում է այն հարցին, թե ինչ խնդրի է նվիրված ուսումնասիրությունը:

Ներածության սկզբում նշվում է ոլորտը, որին անդրադառնում է գիտական ռեֆերատը, այնուհետև նեղացվում է ուսումնասիրության օբյեկտը, սահմանվում առկա բացը, թերությունը և նշվում է, թե ինչ խնդրի է անդրադառնալու, ինչ հարցի է

պատասխանելու գիտական ռեֆերատը (գիտական ռեֆերատի հիմնական նպատակը, հետազոտության խնդիրը)։

3. Մեթոդը (տեսական հիմքերը)

Այս բաժինը պատասխանում է այն հարցին, թե ինչպես է ուսումնասիրվել խնդիրը։ Եթե գիտական ռեֆերատը նվիրված է տեսական հետազոտությանը, ապա «Մեթոդներ» բաժինը փոխարինվում է «Տեսական հիմունքներ» բաժնով։

4. Արդյունքները

Այս բաժինը պատասխանում է այն հարցին, թե որոնք են հիմնական արդյունքները կամ նույնիսկ հայտնագործությունները։ Ներկայացվում են փորձերի, դաշտային աշխատանքների և այլ ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ դիտարկումները (օրինակ՝ համեմատում, հակասությունների դուրս բերում և այլն)։

Հեղինակն այն կարող է ներկայացնել համապատասխան ենթավերնագրերով։

5. Քննարկում

Այս բաժինը պատասխանում է այն հարցին, թե որոնք են ստացված արդյունքները։ Այստեղ նկարագրվում են արդյունքների նշանակությունը՝ ելնելով առարկայի վերաբերյալ արդեն իսկ հայտնի տեղեկատվության համատեքստից։

Կարելի է ներկայացնել ընդհանուր և հատուկ եզրակացություններ։ Սակայն հարկավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ տվյալ բաժինը չի ամփոփում գիտական ռեֆերատը, դա արվում է Ամփոփագրում։ Այս բաժինն անհրաժեշտ է կապել Ներածության հետ, հղում կատարելով առաջադրված հարցերին և հիպոթեզին, նշել, թե ինչպես են արդյունքները կապվում գիտական ռեֆերատը ներկայացնողի սպասելիքների և վկայակոչած աղբյուրների հետ։ Արդյո՞ք արդյունքները համապատասխանում կամ հակադրվում են առկա տեսություններին։ Կան արդյո՞ք սահմանափակումներ։ Կարելի է ներկայացնել նաև հետագա փորձերի, կիրառման և ընդլայնման հնարավորությունները։

Հեղինակն այն կարող է ներկայացնել համապատասխան ենթավերնագրերով։

6. Եզրակացություն

Հիմնական բովանդակությանը հետևում է եզրակացությունը, որը պարունակում է գիտական ռեֆերատի հիմնական տեքստի գլխավոր գաղափարները։

7. Օգտագործված գրականության ցանկ

Գիտական ռեֆերատի վերջում ռուսերեն և անգլերեն լեզուներով ներկայացվում են

- հեղինակ(ներ)ի անուն ազգանուն(ներ)ը, գիտական աստիճանը, կոչումը (առկայության դեպքում), աշխատանքի վայրը, պաշտոնը (ամբողջությամբ՝ առանց հապավումների),
- գիտական ռեֆերատի վերնագիրը,
- գիտական ռեֆերատի ամփոփագիրը և հիմնաբառերը։

Լրացուցիչ տեղեկատվություն

Համապատասխան մասնագիտական ամբիոնը գիտական ռեֆերատի մասին տալիս է կարծիք, որտեղ պետք է հստակ նշված լինի դրա համապատասխանությունն այն մասնագիտությանը, որով դիմորդը ներկայացրել է ասպիրանտուրայի ընդունելության/հայցորդ ձևակերպվելու հայտը, ինչպես նաև այն, որ գիտական ռեֆերատը համապատասխանում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին։